## Արձանագրություն N 3
## ԱՔ-ԲՄԱՇՁԲ-26/2 ծածկագրով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Արմավիր

01 հունիսի 2026թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Լիանա Հայրապետյան
Հանձնաժողովի
Գնահատող անդամներ՝ Հովհաննես Առաքելյան, Սյուզաննա Իսախանյան
Բացող անդամներ՝ Իրինա Գալստյան, Օքսաննա Պետրոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Սաղաֆ Զորաբյան

### 1. Հանձնաժողովի նիստի օրակարգը
**(Լիանա Հայրապետյան)**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Անհամապատասխանությունները շտկելու մասին,
3. Ներկայացված գնային առաջարկների մասին,
4. Գնահատման մասին,
5. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին,
6. Ներկայացված հիմնավորումների մասին:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:***

### 2. Անհամապատասխանությունները շտկելու մասին
**(Լիանա Հայրապետյան)**

**Քանի որ հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել էին անհամապատասխանություններ, ուստի հանձնաժողովը որոշել էր.**

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 41-րդ կետի համաձայն վերը նշված անհամապատասխանությունները շտկելու նպատակով ծանուցել **«ՆԱԳՇԻՆ» ՍՊԸ-ին, ԿԱՍԿԱԴ ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ – «ԳԼՈԲԱԼ ՀԻԴՐՈՍՏՐՈՅ» ՍՊԸ կոնսորցիումին**, որոնք պետք է ներկայացնեն շտկված փաստաթղթերը մինչև 01.06.2026թ. 12:00-ն ներառյալ:

Սահմանված ժամկետում մասնակցի կողմից ներկայացվել է շտկված փաստաթուղթը:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:***

### 3. Ներկայացված գնային առաջարկների մասին
**(Լիանա Հայրապետյան)**

Մասնակիցների կողմից առաջարկած պայմանագրի կատարման գները հետևյալն են.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները ՀՀ դրամ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Գինն առանց ԱԱՀ | ԱԱՀ | Ընդհանուր | Նախահաշվային գին |
| 1 | **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Սայաթ-Նովա փողոցի 1Ա, 2Ա, 3Ա, 4Ա, 5Ա, 6Ա, 7Ա, 8Ա բազմաբնակարան բնակելի շենքերի բակային տարածքների խմելու ջրամատակարարման նոր համակարգի կառուցման աշխատանքներ** | | | | **112 145 374** |
| | «ՆԱՐ ՇԻՆ ԳՐՈՒՊ» » ՍՊԸ-«Արտ | 68075000 | 13615000 | 81690000 | |

| | | | |
|---|---|---|---|
| Պլաս» ՍՊԸ կոնսորցիում | | | |
| «ԿԱՍԿԱԴ ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ – «ԳԼՈԲԱԼ ՀԻԴՐՈՍՏՐՈՅ» ՍՊԸ կոնսորցիում | 71950000 | 14390000 | 86340000 |
| «ՍՏԱՆԴԱՐՏ ՊԱՐԿ» ՍՊԸ - «ԳԼՈԲԱԼ ՀԻԴՐՈ ՇԻՆ» ՍՊԸ ՀԳ | 76632500 | 15326500 | 91959000 |
| «ՆԱԳՇԻՆ» ՍՊԸ | 77902500 | 15580500 | 93483000 |

***Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:***

## 4.Գնահատման մասին

**(Լիանա Հայրապետյան)**

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակիցներից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Առաջարկված հայտերի հիման վրա հանձնաժողովը որոշեց.

| Հ/Հ | Մասնակիցը | Չափաբաժինը |
|---|---|---|
| | *Ընտրված մասնակից ճանաչել՝* | |
| 1 | «ՆԱՐ ՇԻՆ ԳՐՈՒՊ» » ՍՊԸ-«Արտ Պլաս» ՍՊԸ կոնսորցիում | 1 |
| | *երկրորդ տեղ զբաղեցնող ճանաչել* | |
| 1 | «ԿԱՍԿԱԴ ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ – «ԳԼՈԲԱԼ ՀԻԴՐՈՍՏՐՈՅ» ՍՊԸ կոնսորցիում | 1 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0:***

## 5. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին

**(Լիանա Հայրապետյան)**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում և անգործության ժամկետ սահմանել հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրը ներառյալ:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:***

## 6. Ներկայացված հիմնավորումների մասին

**(Լիանա Հայրապետյան)**

Էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսանկյունից՝ **հիմնավորումներ չեն ներկայացվել:**

***Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի

Նախագահ՝ Լիանա Հայրապետյան

անդամներ՝ Հովհաննես Առաքելյան

Սյուզաննա Իսախանյան

Իրինա Գալստյան

Օքսաննա Պետրոսյան

Քարտուղար՝ Սադաֆ Զորաբյան